

ՀԱՐԱՐԱԹԵՐԹ ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,

ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Յ. ՂԱՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱԳԵՏ.

ՔԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻՍՅԵԱՆ ԵՒ ԱՆՎԵՐՄԱՆ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ

ՔԱՆԱՍԱՅԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ

	ՏԼ. ՍՔ.	Տարեկան	10 ֆրանք.
Տարեկան	1 50		
Վեցամսեայ	75	Բաժանորդացիին կԱՆՈՒԿ	
Եռամսեայ	40	վճարի է միշտ:	

Մտար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝
T. the DICKINS PUBLISHING CO., 145 EAST 23D ST., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԹ, ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 15 1898.

ՆՈՐ ՀՈՎԻԻԸ — Ստրանկան Եպիսկոպոս հոս է:

Հակառակ ժողովրդի բացասական քուէին՝ Նորին Գերապատուութիւն Հայրիկի որչա՞մամբ քաղաքս հասաւ անցեալ շաբթու՝ Մ. Նահանգաց Հայ գաղթականութիւնը հովուելու պաշտօնով: Անցեալ Շաբաթ առաւ Նիւ Եորքի, Ուոթըրի Փրովիտէնսի և ձեռքի Հոգաբարձութեանց ներկայացուցիչները, ինչպէս նաև Հայ Հոգեւորականութիւնը պաշտօնապէս գիտուորեցին նորապսակ Եպիսկոպոսը՝ Քիւնարտի նաւամատոյցին վրայ. ու Կիրակի օր Վաղինակ Վարդապետ Պատարագի մէջ յիշեց զՅովսէփ Եպիսկոպոս իրը ընդհանուր բարեկամ առաջնորդ Մ. Նահանգաց Հայոց:

Այս երեւոյթներն ցոյց կուտան թէ քանի մը ամիս առաջ «Ո՞՞» պատասխանող ժողովուրդը որչա՞մ է գոհ երևիլ Վիշափառի բնարութեան առջև, թէ և ինչպիսիք լայն արտաքին, մենք կը հաւատարմութիւն ժողովուրդը, մանաւանդ երիտասարդութիւնը, ցաւցած է ի սրտէ, Կի Հայրիկ Ամբրիկայի Հայութեան սիրաբար խորունկ վիրասրբց Երբ կարեւորութիւն չը տուաւ անոր ձայնին ու քուէին: Եթէ մեր ձայնը կարեւորութիւն ունէր, Հայրիկ յարգելու էր զայն, իսկ եթէ Ամբրիկայի ժողովուրդը զուրկ էր նշանակութենէ, հարկ չի կար անոր կամքը խնդրել հեռաբար անգամ: Եւ նշանակութիւն չունեցող ժողովուրդի մը կարծի՞ Եպիսկոպոս - Առաջնորդ մը զրկել: Մեզ կը թուի թէ այս բացարձակ պարագայի մէջ զրոնարին է տարբերութիւն մը գտնել Հոովմի միակնեան Պապին ու Էջմիածնի ժողովուրդական Կաթողիկոսին մէջ: Մեր Եկեղեցւոյ Հանրապետական ոգւոյն ծանօթ օտարականներ տարակույս չունինք թէ պիտի խնդային Ամբրիկայի Հայոց միամտութեան վրայ եթէ յամենուտ բողոքոյ ձայնը չի բարձրանային այս առթիւ եկեղեցւոյ ամենէ բարձր պաշտօնէին դէմ անգամ:

Սակայն Ստրանկան Արքայան հոս է: Ժողովուրդը զայն ընդունեց ի յարգանս Հայոց Հայրիկին. իսկ մամուլը, ժողովրդի ձայնին թարգման, զժգոհ ըլլալով հոնցերձ բնարութեան կերպէն, պարտականութիւն կը գտայ մէկ կողմէն կուրել ու բողոքել սխալին դէմ, իսկ միւս կողմէ՞ աշխարհ ըլլալ նորեկ Եպիսկոպոսին՝ իր կարողութեան շարժով՝ անգլիական աղաքային գործոց լաւագոյն ձեւ մը տալու համար:

Ստրանկան սրբազան Ամբրիկայի «տարակարծիք» Հայ ժողովուրդը ըստ արժանեանս հովուել կարենալու համար մեզ կը թուի թէ Հայ եկեղեցականներէն սիրելու է նախ իր երկաթեայ գաւազանաւ՝ անոնց մէջ համերաշխութիւն մը յառաջ բերելու համար: Թէ ինչո՞ւ գաւազանի պէտք կայ, աւելորդ կը սեպենք հոս բացատրել սա համոզմամբ թէ Եպիսկոպոսին բազմ կները պէտք չի պիտի թողուն մեզ մանրամասնութիւններ մէջ բերելով ժողովուրդը ժամավաճառ ընել:

Գործերը շատ են. ճանապարհը փշոտ է Ստրանկան Արքայանի դէմ: Իւր սեղանի վրայ կուտակուած շատ մը կարեւոր խնդիրներ կան, զորս հարկ չենք սեպեր այժմ թուել հոս, միայն կը բաւականանք քանի մը կարեւորագոյններն յիշելով անցին:

Ամբրիկայի շատ մը հայաբնակ կեդրոններու մէջ բողոքմամբիւ հայ մանկապետ կրթութենէ գուրկ, մայրենի լեզուէ գուրկ փողոցները մնացած են անաէր անտիրական: Ասոնցմէ շատեր, երբեմն իրենց իսկ ծնողաց հաճութեամբ, տեղացի ընկերութեանց ձեռքով հեռաւոր վայրեր կը զըրկուին՝ տեղացի ընտանիքներու քով որդեկորուելու համար: Մեր գաղթականութիւնն թէ և Հայրենիքի մէջ գտնուող որբերն հոգալու համար ամէն ճիգ ի գործ կը դնէ, բայց

իր այս տեղի որբերն մոռցած է բոլորովին:
Հայ երիտասարդութիւն մ'ունինք հոս, կիրարկուելու երիտասարդութիւն մը որ կը փտտի մոլութեանց մէջ, կը ձուլուի օտարներու հետ ու կ'ոչնչանայ գործարանի փակ մ'իջնորտին տակ: Բարոյական ու ֆիզիքական կորստեան անդունդէն զայն ազատելու համար կարող ձեռքբուլ կը կարոտէինք երկար ժամանակէ ի վեր:

Որբերու խնդիր ունինք. Ձեռքով խնդիր ունինք. Ութըրի եկեղեցին պարագի տակ կը հեծէ. ձեռքով մէջ աղաքային շէնք մը կառուցանելու ճիգեր կը ըլլան. կուսակցութիւններ շատցած են ամեն կողմ. ժողովուրդը բազմացած և անոր հոգեբերն կրկնապատուած են Գալիֆորնիայէն մինչև Նիւ Եորք ամեն վայր. հապա խաշապոնները, որք կը վրտան ամեն կողմ. . . . կ'ուր կայ տեղ տեղ Հայուն և Հայուն միջև:

Նիւ Եորքի ժողովուրդը գուցէ ուրիշ տեղերէ աւելի հոգածութեան պէտք ունի այժմ: Որբերուն համար մեծ բան մը չըրուա Նիւ Եորքցիին. իր հանգանակած 500 աղաքը դեռ կը քնանայ եղեր գանձապահին քով: Ձեռքով համար մեր ընկերներն օգին մէջ են ապակալին: Ժողովուրդը, որ երբեմն քահանայ մը պահելու կը դժկամակէր, այսօր երկու եկեղեցականներու բնոյն տակ ընկճուել սկսած է:

Ասոնք և ասոնց նման շատ մը խնդիրներ կան որք քաջ հովուի մը անձնուէր և աշաւորձ /աշխատութեան կը կարօտին: Եթէ Ստրանկան Արքայան փորձէ կարգադրել զանոնք, տարակույս չունինք բնաւ թէ շատեր ն. Գերապատուութեան ալ բողոքելու պիտի դառնան՝ գործն ի գլուխ հանելու համար. և երբ յաջողի, գորուոր սպեղանի մը գրած պիտի ըլլայ մեր այն վէճի վրայ գոր պատճառեց վերջերս Խրիմեան Հարիկ: Զ. է.

Ք Ն Ն Ա Դ Ա Տ Ա Կ Ա Ն
ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԼՈՅՍԵՐ

Սակայն շարունակենք կարգալ, և տեսնենք թէ ուրիշ ինչեր կան այս քաղաքագրքին մէջ որ ոմանց հիացում պատճառով է կեր:

«Աստուած միջոցներով կ'ստեղծէ և կը գործէ, և թէ, թէ որ առանց Աստուծոյ բնական կերպով եղած ըլլային, հիմայ պիտի չըլլային»: Բան մը հասկցո՞ք:

«Հասարակ խոտերը որք քառասուն կամ յիսուն ոտք բարձր կը ըլլան տաք կլիմաներու մէջ, հոս մի և նոյն խոտերը հազիւ կը ըլլան չորս կամ հինգ ոտք»:

«Բառասուն կամ յիսուն ոտք բարձր խոտ— ոչ թէ ծառ— յաճ ու տեսած ունի՞ք»:

«Ինչ է Զուրը— Զուրը թթուածին և ջրածին ըստ ան երկու տարրերու բաղադրութիւնն է: Թէ որ իննէն ու յիս մասը թթուածին և մէկ մասը ջրածին բերելու ըլլանք մէկ տեղ խոտենք կը ըլլայ ջուր»:

Տէր ողորմեա . . . այս ալ պիտի լսենք եղեր: Զուրին մէջ թթուածինը բնաւ «աննէ մեծ մասը», չի կազմեր. տարբարաններու ըստին նայելով երկու մաս ջրածինն ու մէկ մաս թթուածինը մէկտեղ գալով ջուր կը ըլլան Սակայն մեզ համար հանելուկ մ'է տակալին թէ Պատ. Ֆիլեան ինչ գործ ունի ջուրերու, գիտական խնդիրներու մէջ մրանել փաստեր ու օրինակներ գտնելու համար, քանի որ իւր համարութիւնն այդ մասին ցանցաւ է ու սահմանափակ:

Անտիքի երկրաշարժին վրայ խոտեղով Պատուելին կը ըսէ. «Յունաց եկեղեցին շատ հոյակապ շէնք մ'էր, բայց բոլորովին գետնին յատակը երթալով, եկեղեցիին կից խոտցին մէջը ժամկտին երկու վաւակներն ալ շէնքին հետ մէկտեղ շէնքին յատակը գալով էին, բայց մէկ շաբաթ վերջը երբոր քահանան եկեղեցիին սպին վրայ պաշտօն կը մտնուցանէր՝ գետնին ներքեւէն ձայն մը լսեց, որ մեզ ասիէ հանցեցէք կը կոչէր և քահանան ասիկայ ժողովուրդին ըսելով, ձայնին ելած տեղը՝ փորեցին և քանի մը կանգուն վար իջնալով գտան թէ ժամկտին երկու աղաքները գերեզմանի պէս տեղ մը ուղ մնացած էին և կը կարծէին թէ միայն մէկ ժամ հոս մնացած են»:

Հաւանակ'ան է այս . . . Մարդ Աստուծոյ, «բոլորովին գետնին յատակը», որ Նրինային Լոյսերու կարծեօք քանի մը կանգուն վար կը նշանակէ, մէկ շաբաթ առանց հացի, ջուրի, լոյսի և օդի մարդ կրնայ ապրիլ: Յովնանի ձուկին վրայ տարակուսողներուն աչքը լոյս:

Թէ և այս գրքի միայն Լոյսերն մասը աչքէ անցունել մտադրած էինք, բայց սահմաններն մէկ կտորն այնչափ անհեթեթ ու տարօրինակ կը գտնենք որ չենք կրնար մէջ չի բերել այս տեղ: «Նէ Յահուաի մ'ըլլէթի վէ նէ ան էլ մ'էն մի'ըլլէթի պիտ սահա մ'ըլլէթ հալունտէ էսկի փատիշահ-ըլլէթըրնը էլէ կէթիլէ պիլէնէլէրէր: Զիւնքի պու իթի մի'ըլլէթէր տախի Ալլահըն ախլաքի եազընը գըլմէթընի պիլմէթիլէր» ինչ յոռի տրամաբանութիւն . . . կրնաս նէ մէջէն ելիլ: Դեռ քանի մը շաբաթ առաջ Պատուելի Ֆիլեան բոլորովին տարբեր մարգարէութիւններ կը նէր. քանի մը ամիսէն Հայք պիտի ազատին ըսաւ այստեսխոսութեան մը մէջ, և մեզ վստահացնելու համար այս մասին՝ Ս. Գրոց սպաստանեցաւ: Արդեօք Երկնային Լոյսերու այս շարագու-

շակ մարգարէութիւնն կատարու'ան է Պատ. Ֆիլեանի փառաւոր գուշակութեանց: Բայց ինչ որ ալ ըլլայ, հաւատութիւնն ակներե է. կամ Հայ աղգէն յոյսերնս կարելու ենք կամ Երկնային Լոյսերէն, եթէ Պատ. Հեղինակը նոր լոյս մը չի սփռէ իւր քարոզագրքին վրայ:

Մեզ ներկել ըլլայ հարցնել հոս թէ ինչո՞ւ տաճիկ ազգը թագաւորութիւն կուենայ, քրիստոնեաներ կը ջարդէ, և միևնույն տան կապրի տակալին. մի'թէ տաճիկը մեզմէ աւելի արժանիք ունեցող ժողովուրդ է: Ինչո՞ւ կապրի Չինը, ինչո՞ւ շին ոչնչանայ Հրեայներն և ուրիշ ոչ քրիստոնեայ ազգեր, մի'նչքեւ Հայք, որ շատ մը դէթ Պատուելի Ֆիլեանի նման գաւակներ ունի, դարեւն ի վեր կը շարժարուի անխիղճ անօրէն ազգերու ձեռք: Եթէ Երկնային Լոյսերու վերե քարոզաններն ճշմարտութիւններ լինէին, մեր կարծեօք, Հայք ազգերու հզօրագոյնն ու ամենէ կրթանիկը կը ամ պիտի ըլլար:

Սակայն շուտ շուտ անցինք, ամենէ տարօրինակն ու զարմանալին տեսնելու համար, որ ընդհանուր գայրոյթ պատճառեց քարոզագրքի բարեկամներուն անգամ:

ՇՆՈՐ ՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Խմբագիր,

ՏԻԳՐԻՍԻ միջոցաւ կուգամ իմ խնդակցութիւնը և շնորհակալութիւնը յայտնել Ֆիլաւելիֆոյ ազնուաւորա Հայրեան, որոնք պահած են նահապետական պարզ ու անկեղծ զգացումները և վարույց մաքրութեանը: Տեղւոյն աղաքայիններէն Տեաք Գրիգորեան եղարք, Զաքէ-սեան, Ճամճեան, Ճոն Փիթըրս և Նորմարզ և ուրիշ Հայր իրենց սիրալիր հիւրընկալութեամբ հաստատեցին այս ամէնը:

Ուրախութեամբ լսեցի թէ տեղւոյն փոքրաթիւ Հայ գաղութը Հայաստանի մէջ 20 ամաէր որբերու խրանաբը իր վրայ առած է: Երանի թէ ամեն Հայ գաղութներ Ֆիլաւելիֆոյի մեր եղարք օրինակին հետեւէին, մէկ կողմ՝ ձգելով ազգակործան վէճերը, անուանարկութիւնը և բաժանմունքները: Յայնժամ մեր թշուառ Հայրենիքը տեսնելով որ իր արեւնահոս վէճերն բուն իսկ իւր գաւազան ձեռքով կը փոթաթուրն շուտով պիտի օգեւորուի և պիտի յուսայ ու գործէ իւր փրկութեան համար:

Մ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՎԱՂՈՒԱՆ ՁԱՅՆԸ

Սեպտեմբեր 15 էն սկսեալ Մանչէսթըրի մէջ կը հրատարակուի այս անուամբ ամսեայ աղաքային և գրական հանգէս մը, «աշխատակցութեամբ մտնուարապէս երիտասարդ գրողներու պղտիկ խումբի մը»:

Վաղուան Ձայնի առաջին թիւը, որ կը ապրուանակէ 16 երեսներ, «Մենք», վերնագրով յօդուածի մը մէջ կը պարզէ թերթի ուղղութիւնն որ է՝ հանրային բարքերն ազնուացնել: Այս հանդիսին մէջ մեզ դարմանալու թուածն է թերթին անունն: Խմբագրութիւնն ինչպէս պիտի կարողանայ վաղուան ձայնը այսօր հանել գժուարին է հասկնալ: Մեր նոր պաշտօնակիցները արգեօք չեն յամար հաւատարմութեան անունը կը զըսէ թէ «ժամանակէն առաջ խօսող աքաղաղին գլուխը կը կտրեն»:

Յաջողութիւն մաղթելով Վաղուան Ձայնին, կուպանք հանրային բարքերն ազնուացնելու համար հզօր ձայն մը լսել անոր խմբագիրներէն:

ԱՐՓԻԱՐԻ ԽՆԴԻՐ

Այս սրենքը քանի մը շարաթէ ի վեր բացած ենք Պ. Արփիարի ծանօթ խնդրոյն թեր ու դէմ գորող մի քանի կուսակցական բարեկամներու առջև՝ ճշմարտութիւնն երևան բերելու միակ նպատակաւ։ Կը ցաւինք սակայն ըսել թէ ցարդ գրուածներն դրական ու է փաստ մը չի կրցին ներկայացնել ԲՈՒՆ խնդիրը լուսաբանելու համար Յիշելու է թէ վիճարանութեան ենթարկուած խնդիրն սա է թէ Արփիար դաւաճանած է ազգը. և ուստի վիճարանողներն ջանալու են խնդրէն չի շեղել ու իրար չի վիրաւորել պարզ վիճարանութեան մը մէջ։ Այս բանակոտին առթիւ— գոր պիտի փակենք մի քանի շարաթէն—արտուող յայտնողներուն պատասխանած ըլլալու համար ըսելու ենք թէ ԽՆԴԻՐ վիճարանութիւնն այս կամ այն կողմին կողմնակցութիւնը քան չէ ու պիտի չընէ բնաւ, միայն վիճարանութիւնն փակած ժամանակ իր գոյացուցած համոզումն պիտի հըրատարակէ՝ առանց ունէ նկատումի։ Կը փոփաքինք նաև ըսի այս առթիւ թէ այս վիճարանութեան մասնակցողներն եթէ կուզեն ամբողջովին հրատարակուած տեսնել իրենց նամակներն, պարտին համառօտ գրել։ Մէկ սրենակէ աւելի տեղ չի պիտի կրնանք տալ սակէ վերջ ու է նամակին։ Մի անգամ ըսուած բանը կըրկին և կրկին անգամ ըսելու պէտք չի կայ բնաւ։ Գիտնալու է թէ ընթերցողք վիճարանութիւնն միայն շեն փնտռել ՏԻԵՐԻՍԻ մէջ։ Ծնթ. ԽՆԴԻՐ

ԽՈՍԻ ԶԱՍԿՈՂՆԵՐ

Չէի սպասէր երբէք այդչափ սպառնալի և անմիտ պատասխան մը քան Պ. Կ. Մինասեանի գրութիւնը ընդդէմ «Դաշնակցականի» մը, յօդուածին ՏԻԵՐԻՍԻ 47 թիւին մէջ։ Ընդհանրօրէն Դաշնակցականի հասցեագրութեամբ հարկ կը համարիմ մէկ երկու բացատրութիւններ տալ։

Յօդուածագիրը՝ որ կը կարծէ թէ մեծ սխալ մը գտած է Դաշնակցականի գրածին մէջ, կը ցուցնէ թէ ինք կամ անգլիտակիր է և կամ կը խնդարթ խնդիրը։

Պատույ աստանի մը շուրջը կը գառնայ հարցը. Պ. Մինասեան կըսէ. «Եթէ շեմ սխալիք, ԳՅԻՆ էր որ Արփիար կազմեց պատույ աստան մը Պոլսոյ մէջ և յանձն առաւ գտնուել Պատրիարքարանի մէջ»։ Այ՛, Պարոն, եթէ շեմ սխալիք կը ստան ուրեմն։ Կը հարցնէ թէ ո՞ր էր Պոլսոյ Կոմիտէն։ Հոս խնդիրը հակասութեան մէջ կինայ, քանի որ «նախապէս խնդիրը ընդհանրական ըլլալէ առաջ անհատական էր», և կը պահանջէ որ Պոլսոյ Կոմիտէն գատուի Արփիարի հետ. մտքի և ըմբռնումի այս խնդրութիւնը եթէ քիծազելի չէ իրստ ողբալի է։

Նայն իսկ Արփիարի ըսելովն Պոլսոյ ո՛չ Պատրիարքարանի մէջ գատ տեսնուած է ո՛չ ալ Պոլսոյ Կոմիտէն գատի կանչուած է. արդէն ատալ անկարելի էր։ Պոլսոյ մէջ կազմուած աստանը սոսկ անհատական էր, երկու անձերու միջև տեղի ունեցած իրողութիւն մըն է։ Մարտի թիւ 6ի մէջ մանրամասն կը գտնէք անոր պատմութիւնը։

Ատենէ մը իվեր Արփիար փոփոքներ կըլսէ եղեր իր անձին դէմ, օրին մէկը այդ փոփոքներու լրջման կետերը կը գտնէ յանձին Մ. Կիւրճեանի։ Մէկ երկու վտասակելի անձեր պատուս կատանձնեն Արփիարի և Յ. Շահնազարի կողմէ խնդիրը պատույ աստանի մը առջև հանել. և իրր թէ Կիւրճեան փոխուած կու-

տայ։ Ահա Արփիարի պատմածը. հետեւաբար բացարձակապէս ստու է Պատրիարքարանին մէջ աստան կազմուելը և Պոլսոյ Կոմիտէի փոխուած ստալը։ Արդէն Պոլսոյ Կոմիտէն պարտաւոր չէր այդպիսի անհատական խնդրի մէջ խնայու։

Պոլսոյ Կոմիտէն ազգադաւ մը ճանչնալով Արփիարը սպանումի փորձը կը կատարէ, հետեւաբար այս խնդիրը անհատական չէ եղած։ Կարծեմ համոզուեց՞աք Պարոն, որ ձեր գրածները արդիւնք են ակներկ կուրութեան։

Երկրորդ խնդիր. Դրօշակը Մարտի շաբաթ շափելու պատուը չընէր մեզի Արփիարի հետեւող Պարոնը. թէ ինչու, «որովհետեւ Մարտի հրատարակելիք ունէ գրութիւնն պէտք է շահած ըլլայ Վարչութեան անգամոց քուէն» և հիացած իր գրութիւն վրայ «կը տեսնէք», կըսէ, Մարտը մեր կուսակցութեան գաղափարաններու արտայայտութիւնն է։ Ընդհանրապէս մասին գրուածներն ալ քուէարկեցիք, եթէ այս, ինչու դժգոհ էին ձերիններն այդ գրուածներէն, անոնց դէմ ինչու բողոքեցիք։

Սա մտայտ ըսելու թէ ձեր գրութեանը նպատակն է յեղափոխութիւնը տապալել, որոյ աւերակներու վրայ կուզէք քանի մը պարտաւորներու կեանքը երկարել։

Ինչ է Դրօշակ. Դաշնակցութիւնը Հայ Յեղափոխական կուսակցութիւնն էր ըլլալով ունի իր որոշ սկզբունքները, գաղափարները և որոշ ծրագիրը որ կը կազմէ իր հուսաւայ հանգանակը։ Մեր օտակը միշտ արտայայտած է մեր կուսակցութեան գաղափարները։ Դրօշակ գտնուած սկզբունքները մըն է որ կը քալէ անձնական կեցտաւ հաշիւներ մուտք չեն դաներ հոն։ Մեր կուսակցութեանն ամեն անհատ կրնայ գիտադրութիւններ ընել այս կամ այն կէտին վրայ, կրնայ նոյն իսկ խմբագրականները գրել անոր մէջ։ Գալով խմբագրութեանը պարզ միջնորդներ են ամբողջ կուսակցութեան միջև. զուրկ լիազօր հեղինակութիւնէ և ենթակայ փոփոխման։ Վարձկաններ, բայց ոչ այնպէս ինչոր կարծիք և կարծեցնել կուզէք։ Կրնա՞ք Մարտի համար ալ ըսել այդ բանը, ո՛չ, Մարտը անգայն թերթիկ մըն է։ Նիւ Նորք. ՄԻՉԻՐԱՆ Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

ԲԱՐՈՅԱՍԱՆ ԱՆՏԱՆՈՐՆԵՐԸ

Կարգ մը անբարոյականացած դիակներ կը ներխուժեն հրատարակի վրայ և հասարակական գործունէութեան միջնորդը կապականեն։ Ամեն կողմ խօսք խեղաթիւրով միջբոլորներ կը վխտան և բարոյական հիւժմտիտ ենթակայ սկզբնափոխութեանը կարտառութեան։ Դիակեր բորենիներու երկնոս ճիշերը օղբ կազմեն, որոց գերագոյն հաճոյքը ասոր անոր երեսին ժամտի հեղուկը ժայթքեցնելու մէջ է։ Մասնութիւնը, որ ընկերութեան մէջ գտնուած ներխուժիչներու վտարարարներն է, կարգ մը մարդիկ անով միշտ բերաններն լեցուցած՝ պատուակ կը փնտռեն անկէ ասոր և անոր երեսին փչելու։ Բարոյական ժանտախտ կայ։

Դաշնակցութեան հարազատ ձագուկներէն Լեւոնեանը Պ. Արփիարին նոր ձեռով մատնիչ բռնու մոլորեցնութեան մ'ընում՝ գիւտ մը գտածի պէս՝ «Մարտ»ի մէջ Մերսիին բանտարկելոց նկատմամբ գրածներէն կոչումներ ընելով, ստոնցմէ իրր թէ հակասութիւնն կը հանէ և կ'եզերտակցեն, «Ալ կասկած կայ՝ մասնութեան»։ Մերսիին բանտարկեաները ո՛չ հեռուէն և ո՛չ մօտէն յարարարութիւն ունենին Զնչակեանց հետ

թիւ 8ը «Մարտ»ի մէջ, իսկ թիւ 13ի մէջ Զնչակեան ներկայացուցիչներ կը գառնան, «սա ալ մատնութիւն է»։

«Մարտ»ի Տրդ թիւը աչքէ անցունողը կը տեսնէ թէ վերալիշեալ արտաւորը, իր շարնպատակին հասնելու դիտումով, «Մարտ»էն ըրած կոչումներու մէկին մէջէն «Եթե Մասամբ» երկու ամենակարեւոր բառերը յայտնի կերպով գտնց կընէ, որպէսզի «հակասութիւնն կայ» ըսելու պատճառով մը գտնէ։ Արդէն այդ երկու գտնց առնուած բառերը եթէ տեղը դնենք, այն ասան կը կարգանք — «Բանտարկեաներու ՄԵՄ ՄԱՍԸ կը կազմեն գործէն բնաւ անդեկութիւն չունեցողներ»։ Աստի կը հասկցուի թէ բանտարկելոց ՓՈՒՔԻ ՄԱՍԸ կը կազմեն գործէն տեղեկութիւն ունեցողներ. հետեւաբար «Մարտ»ի Տրդ և 10րդ թիւերու գրածներուն մէջ հակասութիւնն անդի չունենար և Լեւոնեանի գրադարձը ոգին իսկ հոս կը պատահէ։ Հիմայ որոշ կը տեսնուի թէ ինչ սյլանդակ շարտարութեամբ այդ հարազատ Դաշնակցականը այդ երկու բառերը անտես առեր է, որով սակայն՝ ետեւեւ ընդեր մէջ ընկածի պէս՝ բուրթը թողուցած զուրս կ'իլլէ խոյտարակարար։ Առաջը կրէ, «ՄՉ գը այնքան կոյր է, որքան այն որ տեսնել չուզէր», Դաշնակցականը հաւկոյր եղած չէր, տեսած էր այն երկու բառերը, սակայն տեսնել չէր ըրած։ Զնչակեան վարչը երբ իրենց գործը գիտեն. Մերսիին բանտարկեաները ինչպէս ներկայացուցին այնպէս ալ անոնց ամենն այդպէս արձակուելու լուրին։ Զնչ. Կուսակցութիւնը արդէն յայտնի ապացոյց տուած է թէ՛ ամեն աստի պատարտաւ է իր ամեն կարգի գործիչը ստքի տակ առնելու՝ եթէ անոր վրայ բանաւոր փոտակելով զկուսակցութեանը հաստատուին։ Հազիւ 2 տարի անց և ա՛յն Զնչ. Կուսակցութիւնը իր երկրորդ ընդհ. ժողովը կուսակցութեանը ուր Ամերիկայէն մեր ներկայացուցիչները զրկուած ենք։ Մենք մեր գործը գետնեք, Պ. Դաշնակցականներ, դուք ձեզ հոգայէք որ ԵՂՄ արտան գլուխը իր թէ բնդէ. ժողով մը ունեցաք, չը կըրցիք ձեր կողմէ Ամերիկայէն զգնէ մէկ ներկայացուցիչ ունենալ անոր մէջ և ա՛յն արդէն լուր կը տարածուի թէ այդ ժողովին մէջ եղած ներկայացուցիչները իրարու վրտա պատակով գրուեր են։ Դուք ձեր գործին նայեցէք։ Գ. Պ. ՉԻԹՃԵԱՆ

ԲՈՂՈՒՔ ԱՆԳՂԻԱՅԷՆ

Մտնչէսթըր, Սեպտ. 30
Խմբագիր Տիգրիսի

Ամերիկայի առաջնորդ Մարտեան Եղիկոպոս վաղուան շոգնաւով կողմէ կուզայ։ Իրեն միացած է, ստորիէ մը իվեր հոս գտնուող, Գ. Դեան։ Վերջին պաշտօն ուղտան լըսեցի թէ այդտեղ հասնելէն քանի մը շարաթ վերջ անմիջապէս վարդապետ պիտի ձեռնադրուի։

Թէ՛ նոր աշխարհի մեր եղբայրներէն և թէ՛ ՏԻԵՐԻՍԷՆ կը խնդրեմ որ այդ ձեռնադրութեան արգելք հանդիսանան, որովհետեւ ԱՐՓԱՆԻ ՉԷ՛ Ազգին հացովը ապրող ոչինչ սեւ-զլուրներ չառ կան. հատ մ'ալ թո՛ղ չ'աւելնայ։ Այս հակասակութիւնն անձնական չէ. որտիս ցաւէն ստիպուեցայ անմիջապէս իմացնել. եթէ այդ երիտասարդ խարեն-խուրբասական ձեռնորդ կոծաւոր ձեռնադրուի, գիտցած եղբք պապայային ազգին օգտակար չ'ըլլալէն զատ պէլա պիտի ըլլայ որովհետեւ իւր արտի զգացումները իրստ ոչինչ տեսակէն ըլլալէն զատ ուղեղն ալ շափազանց թուլիկ է . . . ԲՈՂՈՒՔՈՂ ՄԸ

Մ Ա Ն Բ Ա Լ Ո Ւ Բ Ք

«Իրաւունք»ի մէջ կը կարդանք. — «Իրաւունքայ թերթեր կ'իմացնեն

որ այն փոփոխուած դպրոցները որոնք նիւթապէս ապահովուած են, պիտի վերաբարձուին կառավարական դպրոցներու տեսչութեան ձեռքով։ Այնպէս պիտի բացուին թիֆլիսի Յոգնանեան, Գոյիանեան և Թանգոյեան վարժապարտները, Հաւրարի դպրոցը, գուցէ նաև նարաչէնի և Ս. Նշանի դպրոցները։ Կրտսի թէ Յոգնանեան դպրոցը, որ մեծ եկամուտ ունի, չը պիտի մնայ երկդասեան տարրական դպրոց, այլ պիտի վերածուի աւելի բարձր կրթարանի մը։ Բացառելիք դպրոցներուն գատասանները պիտի նշանակուին կառավարական դպրոցներու տեսչութեանն։»

«Շարժում»ի մէջ կը կարդանք. Ազգացեալ Գրիգոր Արժուանի եղբայր, և «Մշակ» ի հրատարակիչ Բրոֆէսէօ Անդրէաս Արժուանի, թուքերու շատ ծանր հիւանդութեան մը բռնուած է և կը գարմատուի Հօգնէ-հօնէֆի գերմանական հիւանդանոցին մէջ։

«Անթապի մէջ սրբանոց մը բացուած է 40 սրբերու համար։ Տարեկան 240 սակի ծախքէն 180ր Պատրիարքարանը պիտի վճարէ՝ իսկ մնացեալը հոգաբարձութիւնը պիտի հոգայ։»

«Տիգրանակերտէն կը գրեն թէ գատական վճռով Լճի Մակարաճեցոց վանքը, զոր ստորի վանակներն կորցել կուզէին, վերջնապէս ճանչցուէր է իր շայկական ստամուտք։

— Հոկ. 2ին Կիրակի օր Խաչ վարդապետ մասնաւոր հրաւիրածք թըրջի մէկ եպիսկոպոսական եկեղեցոյ մը մէջ պատարագեց, ու Աղբ. հոգաբարձութիւն մը ընտրեց որոյ անդամներն են Տիրաք Հայրապետեան, Սիրեան, Ճաֆէրեան, Մատթէոսեան և Ալոստեան։

— Լօվէէ կը գրեն. «Տեղաւ այժմ օրէ օր կ'աճին կարգ մը սրկաններ որք իրենց բան գործը ըրած են վիճակախաղը (խուճար)։ Աստի մէկ ստաուրնէ կը նտսին մինչև միւս օր առաւօտ կը գրապին նոյն մեծնախաւոր գործով։ Այս կարգին մէջ մեծ տեղ կը բռնեն Մազկերացիք որոց ասան մէջ տեղի ունեցաւ նաև անտուկ կուրելով գողութիւն։ Ուրիշ դէպք մըն ալ պատահեցաւ. Հօղցի Մ. Տէրաբեան անուն անձը իր անեկակցի անտուկը բանալով գրամատան գիրքը կը գողնայ ու անմիջապէս գրամատան գրիմելով ստակը գտնելի կ'աշխատի. գտնուած պետը կ'ապահովելով չի վճարեր ու գիրքն անոր ձեռքէն առնելով վար կը դնէ։ Տէրաբեան կ'իլլը կը դնէ. կը կարծուի թէ նիւ երբք գնացած է, իր հետ տանելով իր ընկերոջ գեղատները և շատ մը . . . պարտաբեր։»

Է՛, ինչ ըսենք այսպէսներուն . . . — Պոթանէն կը գրեն. «Բղեցի երիտասարդ մը օրերս Գինէ (նիւ Համշիր) հոս եկած ըլլալով՝ ամերիկուհիի մը հետ կը ծանօթանայ՝ փողոցը՝ իրեն տուածնորդոյ Խարբերցի ընկերի մը միջոցաւ, որք նոյն օրը իսկ քաղաքային պաշտօնատունը երթալով ամուսնութեան հըրամանագիր կ'առնեն. բայց իրիկուան Գին մեկնելու ասան երիտասարդը կայարան երթալով իր կնոջ կուստի որ տունէն պիտի գար իրեն ընկերանալու. երկար սպասելէ վերջ զլիսկոր ետ կուգայ։»

Վերջին նամակէ մը կը տեղեկանանք թէ Գղեցի միամիտ երիտասարդը յուսահատած կ'առաջարուութեան դիմելով ամուսնայոյժ եղած է։ Այսօրինակ ամուսնութեան այսպիսի վերջաւորութիւն . . .

ՊՈՒԼՂՈՒՐԻ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹ. BULGUR MANUFACTURING CO.

151 Union St, WORCESTER, MASS.

Կը ծանուցանեն թէ երկարատե փորձառութեան շնորհիւ իրենց շինած պուլըրը մեծ ընդունելութիւն գըտած է ամէն տեղ: Առանց քարի և անախորժ հոտի Պուլըրը ամէն հայ տունէ կը փնտռուի: Մենք, որ միակ Պուլըրի գործարանն ունինք այս քաղաքի մէջ, մեր բոլոր ժամանակը տուած ենք անոր յաջողութեան համար: Մեր յաճախորդք եթէ գոհ չի լինին մեր սպարանքներէն դրամին ետ կը տրուի թէ և ցայսօր ոչ մի հայ տեղագործ թիւն յայտնած է: Մեզ համար կը վկայեն հայ տիկիները:

Պուլըրի լիպրան կարծէ 3 1/2 սէնթ խանութներու և ճաշարաններու համար. իսկ տուններու համար 4 սէնթ: Թանձնարարութիւն ճշդիւ կը կատարուին: Փոխադրութեան ծախքը զընդունելի վրայ է:

ՆՐ ԶԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

ՅԱՆՈՒ ԹԳԹԳԵԱՆ ԵՒ Պ. ԵՐԱՐԵԱՆ

210 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք

Երկու ընկերներն ալ արհեստով խոշորուր ըլլալով, կը վստահացնեն ժողովուրդը թէ պիտի կրնան կատարելագոյն գոհ ընել իրենց յաճախորդները: Հոս պօր ա շի կայ, վստահի սովորական գներով պօր ա պահող ճաշարան մը, մեր համոզումն է թէ կարծիք միայն ու ընտիր նպարներ չէ կարող գործածել:

Կերակուրի մէջ մի պահ կարծէ 10 սէնթ միայն. \$3.50 թիքէթ կարծէ 3 տոլար: Փորձեցէք միանգամ այս նոր ճաշարանին արժէքը հասկնալու համար:

ՏՊԱՐԱՆ ՏԻԳՐԻՍԻ

Այս տպարանի մէջ կը տպագրուին թէ՛ Հայերէն և թէ՛ Անգլիերէն լեզուա զանա տեսակ այցեատման, նամակագրութեան, հրատարակչի, շրջաբերականներ, անարտիկներ ևն:

Մեր գնեքը գոհացուցիչ են. սըպագրութիւնն մաքուր: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք կը կատարուին փութով ու խնամով:

ԹԱԹԵՆՍ ՓԱՓԱՉԵԱՆ

NO- 242 SPRING ST., New York City.

Հայկական ճաշարան նուազանգիտաներուն մօտ լինելով, ուրիշ քաղաքներէ եկող ազգայնաց կրնայ գիւրու թիւնն տալ: 48

ՊՈՒԼՂՈՒՐ-ՊՈՒԼՂՈՒՐ-ՊՈՒԼՂՈՒՐ

ՊԱՆՏԱՍԱՐ ԹԱՇՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

B. TASHJIAN & Co, 53 MAIN ST., BANGS COURT, WORCESTER, MASS.

Կը ծանուցանեն արդոյ հասարակութեան թէ իրենց փայտի գործը յաջողցնելէ վերջ՝ հաստատած են այժմ պուլըրի և ծեծած զործարան մը վերադարձնելու անուան ասի: Այս գործարանի մէջ պատրաստուած սպարանքներն ոչ միայն գիւրամատչելի գներով կը վաճառուին, այլ և մաքուրութեան ու անասկի կողմէ անհամեմատ ընտիր են ուրիշներէ:

Պանութպաններու համար խոշոր կամ մանր պուլըրի փառնետը կարծէ 3 սէնթ, իսկ տուններու համար 3 1/2 սէնթ: Տուններու և ճաշարաններու համար գիւրութիւն տալու նպատակաւ որոշուած է մինչ և 25 փառնետ քանակութեան արդարեւ վաճառել:

Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնք փութով և ճշդիւ կը կատարուին: Փորձեցէք անգամ մը և գոհ պիտի մնաք:

Վճարումներն կանխիկ կը լըլան: Ճանապարհի ծախքը զնդունելի վրայ է:

ՊՕՍԵՐՈՒ ԲՄԶԱՃՈՅԻՆ ԱՋՍՏ

Եղբայրնիս հայրենիք երթալուն համար մեր երկու կողակարի խանութներէն (րիփէյրինկ) մին վաճառել կուզենք դիւրամատչելի գնով, արհեստին անեղեղեակներուն սորվեցնելու պայմանաւ: Մանրամասնութեանց համար գիւրմէլ:

ԲՍՐԵՁԱՆԵԱՆ, ԵՂՋԱՐԲ 706 Shawmut Ave., Boston, Mass.

ԹԱՇՃԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Ց Ա Գ Ո Ր Մ ԵՒ Մ Ս Ա Վ Ա Ճ Ա Ռ

573-579 Բէթ Մ Պ Ր Ո Յ Ը Ս Ք Ր Ի Ք Բ Ե Յ Մ Պ Ր Ո Յ, Մ Ա Ս Ս

Պատիւ ունի ծանուցանել արդոյ հասարակութեան թէ իւր պատրաստած հացը թէ՛ գին և թէ՛ տեսակի մասին չէ կարելի գերազանցել: Ոչ կը փչիք և ոչ ալ թթու է: 1 փնտ. հացը 3 սէնթ միայն կարծէ: Միւր միջա թարմ է ու գնեքը գոհացուցիչ: Կը վաճառէ նաև ածուխ, քարիւղ և վառելիք փայտ: Ունի առանձին ճաշարան մը կցած յիշեալ ճիւղերուն, ուր կը պատրաստուին ընտիր կերակուրներ. առատ և աժան: Մասնաւոր կառք ունի տուն փոխադրելու համար, խիստ աժան գնով: Փորձեցէք անգամ մը:

ՊԵՏՐՈՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ ԵՒ ԵՌԱԼ Զ Ա Ն Ն Է Ս Փ Ս Ս Բ Ա Լ ԶԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Թիւ 154 Իսթ 27րդ փողոց, Նիւ Եորք Նոր կարգադրութիւն, Նոր վարչութիւն և Նոր ճաշարան Պատիւ ունին ծանուցանել հասարակութեան թէ ամօրյ 7 1/2 սկոնալ գնած ու բոլորովին կերպարանափոխ րրած են այս ճաշարանն՝ ներքին վարչութեան տեսակաւ: Խոհարարութիւնն, մաքրութիւնն, գործածուած թարմ մսի և նպարեղէններու տեսակին վստահ են թէ պիտի գնահատուի ընդհանուր ժողովրդէն. բայց վստահ ըլլալու համար թէ ամեն ինչ առաջնակարգ և գոհացուցիչ է այս ճաշարանի մէջ, կը հրատարակեն ազգայինք փորձել գէթ մի անգամ:

ԾԱԽՈՒ ԽԱՆՈՒԹ

Ա. Պետոյան կը ծանուցանէ թէ իր Մօլտընի մէջ ունեցած գործը պիտի վաճառէ հայրենիք վերադառնալ որոշած ըլլալուն համար: Իր վաճառելիք սպարանքներն են նպարեղէններ, շաքարեղէններ, ծխախոտ, փուռ մը, ճաշարան մը, ձի մը և երկու կառք: Բաւական ամբիկացի յաճախորդներ ունի այս գործը:

Դիւրմէ 38 Սէնթըր ԸՍԹ ԻՐԹ, Մօլտըն, Մասս.


MARK C. MEAGHER,

St. Paul Building, No. 220 Broadway, New York City.

ՀՂՍՍՏՏՈՒՆ ԿԱԼՈՒԱՄ ՄԵՄԱԳՈՅԵ ՆԻՒ ԵՌՔԻ ՄԷՋ

Շարժական 1.00 միայն ՄԷԿ տուր վճարելով կրնա գնել մի տունի տեղ ի Մուրէյ շէլ փառք, որ Մեծագոյն Նիւ Եորքի ու յիսարհագրական կեդրոնն է Յըլլինի կից: Սա տեղը ծովի մակերևոյթէն 120 ոտք բարձրութիւն ունի, ուր 34րդ փողոցի ֆէրրիէն շինք սէնթով կերթցուի 19 րոպէէն:

Այս Հողերը տեսնել փափաքողներուն երթեկութեան համար ձրի տոմս կը տրուի: Երթալ ու զոդներն ամեն շինքը շարժի և կիրակի օրեր, կէս օրէ վերջ ժամը մէկ ու կէսին, ներկայ գտնուելու են Լոնկ Ասյլընտի ֆէրրիէն առջև, Իսթ 34րդ փողոց, ուր պիտի կրնան տոմս ստանալ Տ. Ս. Եարաբեանէ, որոյ հասցէն է 298 Ուէսթ 12րդ փողոց:



*** * * * * * Բնակութեան համար վայր մընէ փառք, որուն գեղեցկանարարութեան մի անգամ այս վայր: Կան սարակաց ու անրոցներ, եկեղեցի: * * * * *

*** * * * * * մար խոտ յար Մուրէյ շէլ ղեցիկ տեսարանը հրաշալի գնեք հաճիք այցելել Հիմայ Հոն Հա-հարական դրպաներ և այլն: * * * * *

Ուրփացի գալըզձի Եարութիւն

անուանով անձի հասցէն կը խնդրուի գիտցնել խմբագրութեանս:

S. & N. D. MERHIGE & Co.

92 WASHINGTON ST., NEW YORK.

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Բ

Հին և նոր ամէն տեսակ գէնքերու, Գողղիական գոհարեղէններու թէ՛ իրական և թէ՛ նմանութիւն: Կը վաճառեն արեւելեան և տաճկական ամէն տեսակ ասեղնագործեր, սեղանի, դաշնակի, մէնթըլի ևն. ծածկուրդներ ոսկեթել և մետաքսէրու: Գամառի մետաքսէ և մանածէ վարադրներ, Հալէպի աղապանի, քէֆիաներ ևն. Հայ անհատներ ինչպէս նաև հայ խանութպաններ ու վաճառականներ երբ պէտք ունենան այս կարգի սպարանքներ, 10 առ 100 չափէ գրաս, գոհ պիտի մնան այս ծանօթ վաճառատունէն գնելով: Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնք ճշտիւ կը կատարուին:

ՀէնՐիի ԱՄԻԼԵԼՈՒ ՈՒ ՄԱՋ ԿՏՐԵԼՈՒ ԽՆԹ.

Թիւ 200 ԻՍԹ 27րդ փողոց, Ն. Ե. Տաք և պաղ բաղանիքներ

Շաքար և Կիրակի օրէ գատ Երբ զատ քաղանիք Երբ զատ թէ կրնան Երբ զատ Երբ զատ


մանակ վայելիք և թէ փոքր շահ մը ընել՝ Հենք թիքեթի համար վճարելով մէկ տոլար միայն: Սա թիքեթներն Շաքար ու Կիրակի օրեր չեն ընդունուիր:

ՅԱՎՈՐ ԲԱՐԱԿԵԱՆ

Ամերիկեան և Արեւելեան ընդհանուր նպարավաճառ-Կրօսըրիս,

Թիւ 45 Էքսչէնձ փողոց, Ուսթըր:

Կը ծանուցանէ թէ գներու շաքարութեան և նպարեղէններու ընտիր տեսակի մասին կը գերազանց ուրիշ նպարավաճառներ:



Ա. ԹՕՓՈՒՉԵԱՆ. ԿՕՇԿԱՎԱՃԱՌ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐ.

Թիւ 239 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք

Այս խանութին մէջ կը վաճառուին ամէն տեսակ կօշիկներ խիստ աժան գներով: Մեր հայրենակիցներէ փորձ մը միայն կը խնդրենք: Նոր սպարուած կօշիկներ կը կարենք ձևաւոր և վայելուչ կերպով: Կը նորոգենք չին կօշիկներ յափառոր գներով: Ուրիշ մը երթալէ յառաջ ինձ եկէք անցա՞մ մը. և վստահ կըլիք որ շատ զո՞ւ պիտի մնաք: 239 Իսթ 26րդ փողոց Ուրիշ կօշիկներ \$1.25է մինչև \$5.00 Կոշիկներ \$1.25է \$2.50 Տղայաց և տղըր-տի Կոշիկներ \$0.50է \$1.50

Հ Ի Ր Զ Օ Լ Ա

ՄԱՆԻ ԴԵՂ



Կը ԼԵՐԱԳՆԵԼ, ԼԵՐՄԱՔՈՒՆ, Կը փայլեցունէ մազերը ու թափելը կը դադարեցնէ: Կը բուժէ ան մորթի հիւանդութիւնն ու կը մաքրէ թեփերը: Միանգամ փորձելու արեւակն է սաղմունքն արժէքը գիտնալու համար, որ արեւելեան խոտէ պատրաստուած է յայտ հաճելի միջոցով: Կը ծախուի բո-որ զԼԿԱՊՈՐՏԻՆ. տուն յիւ: Հին 50 Սէնթ միայն:

Կարելի է ստանալ նաև ՏԻԳՐԻՍԻ րնկերութեան:

Կը վաճառուի նաև Տ. Ե. Բարակեանի քով, Թիւ 45 Էքսչէնձ ԸՍԹ-րիթ, Ուսթըր, Մասս:



AMIN MERHIGE & Co.

29 BROADWAY, NEW YORK, Room 212

ՄԵՄԱՐԱՆԱԿ (ՀՕՐԵՂ) ՎԱՃԱՌԱԿԱՆԻ

Արեւելեան և Տաճկական Ապրանայ Այս վաճառատունն իր տեսակին մէջ ամենամեծն է ինչի ետքը: Հոն կը վաճառուին ամեն տեսակ ասեղնագործներ, սեղանի, մէնթըլի, փի-անոյի ևն. մետաքսեայ ոսկեթել ծածկուցներ, Գամառի վարադրներ, Բեթիայի աղապանի, քէֆիա, ևն. ևն.:

Հայ վաճառականք կը հրաւիրուին փորձել միանգամ: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք փութով և խնամօք կը կատարուին: Գր-ներն չափաւոր և սպարանքներն լաւագոյն լինելով՝ ուրիշ ո՞ւր և է տուն չէ կարող մըջիլ այս տան հետ: